

Accu-Chek SmartGuide Predict - Օգտագործողի ձեռնարկ

Բովանդակություն

1. Այս ձեռնարկի մասին
2. Արտադրանքի մասին տեղեկատվություն
 - 2.1 Ինչպե՞ս կիրառել
 - 2.2 Օգտագործման ցուցումներ
 - 2.3 Ովքե՞ր կարող են օգտագործել
 - 2.4 Հակացուցումներ
 - 2.5 Սահմանափակումներ
 - 2.6 Ուսուցում
 - 2.7 Հիմնական առանձնահատկություններ
3. Անվտանգության մասին ընդհանուր տեղեկատվություն
4. Հավելվածի օգտագործումը
 - 4.1 Հավելվածի օգտագործման նախապայմանները
 - 4.2 Ծրագրի թարմացված տարբերակներ
5. Ինչպես սկսել
 - 5.1 Հավելվածի տեղադրումը և ապատեղադրումը
 - 5.2 Մուտք Predict հավելված
 - 5.3 Accu-Chek SmartGuide հավելվածի կարգավորումը
6. Ձեր հեռախոսի կարգավորումը
 - 6.1 Ընդհանուր պահանջներ
 - 6.2 Հասանելիության պաշտպանություն
7. Հիմնական էկրան
 - 7.1 Նավիգացիոն տարրեր
8. Գյուլկոզայի կանխատեսում
 - 8.1 Գյուլկոզայի կանխատեսման սխալի մասին հաղորդագրություններ
 - 8.2 Ցածր գյուլկոզայի կանխատեսում
 - 8.3 Գյուլկոզայի ցածր ցուցանիշի բացառություններ
9. Գիշերային գլյուկոզի ցածր մակարդակի կանխատեսում
 - 9.1 Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսման սխալի մասին հաղորդագրություններ
 - 9.2 Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսման ծանուցման ակտիվացում
10. Գյուլկոզայի օրինաչափություններ
 - 10.1 Գյուլկոզայի օրինաչափությունների տեսակները
 - 10.2 Գյուլկոզայի ցածր և բարձր օրինաչափությունների հնարավոր պատճառները
 - 10.3 Գյուլկոզայի օրինաչափության հիշեցման կարգավորում
 - 10.4 Նշում ավելացնելը
 - 10.5 Ծաբաթական ամփոփագրի ծանուցման ակտիվացում
11. Հաշվետվության արտահանում
12. Հավելվածի կարգավորումներ
13. Խնդիրների վերացում
 - 13.1 Խնդիրների վերացում
 - 13.2 Ծանուցումների ընդհանուր նկարագիր
14. Հաճախորդների սպասարկում
15. Տեխնիկական տվյալներ
16. Հավելվածի նշանների բացատրություն

17. Պայմանաշանների բացատրություն

1. Այս ձեռնարկի մասին

Չավելվածի բոլոր գործառույթներին ծանոթանալու համար ուշադիր կարդացե՛ք հրահանգները: Եթե հավելվածը չի աշխատում այնպես, ինչպես ակնկալում եք, տե՛ս սույն Օգտագործողի ձեռնարկի «Խնդիրների վերացում» բաժինը: Եթե դեռևս չեք կարողանում գտնել այն, ինչ փնտրում եք, կապվե՛ք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:

Սույն Օգտագործողի ձեռնարկում հետևյալ տեղեկատվությունն ընդգծված է առանձնահատուկ կերպով.



ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

«ԶԳՈՒՇԱՑՈՒՄ» նշանը վերաբերում է կանխատեսելի լուրջ վտանգին:



ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ

«ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑ» նշանը նկարագրում է, թե ինչպիսի քայլեր պետք է ձեռնարկել արտադրանքն անվտանգ և արդյունավետ օգտագործելու կամ դրա վնասումը կանխելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

«ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ» բաժինը պարունակում է օգտակար տեղեկություններ և խորհուրդներ:

2. Արտադրանքի մասին տեղեկատվություն

2.1 Ինչպե՞ս կիրառել

Accu-Chek® SmartGuide Predict հավելվածը ծրագրային ապահովում է շաքարային դիաբետով մարդկանց համար, որոնք օգտագործում են գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի (CGM) համակարգ:

Accu-Chek SmartGuide Predict հավելվածը՝

- տեղեկատվության կառավարման գործիք է, որն օգնում է շաքարային դիաբետով մարդկանց պատկերացնել և վերլուծել իրենց գլյուկոզայի ցուցանիշը,
- նախատեսված է տնային պայմաններում օգտագործելու համար՝ որպես օգնություն շաքարային դիաբետով մարդկանց գլյուկոզայի ցուցանիշների ամենօրյա կառավարման հարցում:
- ուղեկցող հավելված է Accu-Chek SmartGuide հավելվածի համար:

2.2 Օգտագործման ցուցումներ

Accu-Chek SmartGuide Predict հավելվածը նախատեսված է տնային պայմաններում ամենօրյա օգտագործման համար:

Accu-Chek SmartGuide Predict հավելվածը նախատեսված է գլյուկոզայի շարունակական մոնիթորինգի (CGM) նախորդ տվյալները վերանայելու և ապագա CGM տվյալների վերաբերյալ կանխատեսումներ տրամադրելու համար:

Այս հավելվածի պատշաճ աշխատանքը կախված է համատեղելի հեռախոսից՝ համապատասխան կարգավորումներով:

Համատեղելի հեռախոսների մասին վերջին տեղեկատվության համար այցելեք՝ <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>:

2.3 Ովքե՞ր կարող են օգտագործել

- Չափահասներ՝ 18 տարեկան և բարձր անձինք
- Շաքարային դիաբետ ախտորոշմամբ անձինք

2.4 Հակացուցումներ

- Հավելվածը նախատեսված չէ միացված սարքերի որևէ գործառույթ կառավարելու կամ որևէ տվյալ փոփոխելու համար:
- Հավելվածը նախատեսված չէ փոխարինելու միացված սարքերի հիմնական էկրանը (օրինակ՝ արյան գլյուկոզայի չափիչի, ինսուլինային գրիչների կամ CGM տվյալները համապատասխան CGM հավելվածում):
- Օգտատերերը չպետք է փոխեն իրենց թերապիան՝ հիմնվելով ցուցադրվող տվյալների վրա, առանց իրենց բուժող բժշկի հետ նախապես խորհրդակցելու:

2.5 Սահմանափակումներ

- Accu-Chek SmartGuide Predict հավելվածը պետք է իրական ժամանակում ստանա օգտատիրոջ CGM տվյալները:
- CGM տվյալների հավաքագրման մեջ ընդհատումները կարող են հանգեցնել գործառույթների ավելի ցածր արդյունավետության:

2.6 Ուսուցում

Այս հավելվածը կարելի է օգտագործել առանց նախնական ուսուցման:

2.7 Հիմնական առանձնահատկությունները

Predict հավելվածի պատշաճ աշխատանքի համար Դուք պետք է կարգավորեք Ձեր CGM սենսորը: Հետևե՛ք Accu-Chek SmartGuide հավելվածի Օգտագործողի ձեռնարկի «Ձեր սենսորի չափաբերումը» գլխի քայլերին:

Նվազագույնը 1 ժամ անխափան CGM տվյալների փոխանցում է պահանջվում, որպեսզի Դուք ստանաք Ձեր սկզբնական գլյուկոզայի կանխատեսումը: Եվ առնվազն 1 օրվա տվյալ է պահանջվում՝ գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու Ձեր հավանականությունը կանխատեսելու համար:

Այս բաժինը ներկայացնում է հավելվածի հիմնական գործառույթների ընդհանուր տեսությունը.

- Գլյուկոզայի կանխատեսում
- Ցածր գլյուկոզայի մակարդակի կանխատեսում
- Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսում
- Գլյուկոզայի օրինաչափություններ
- Անհատականացվող ծանուցումներ
- Հաշվետվության արտահանում
- Հիմնական Էկրան
- Տվյալների փոխանցում
- Անխափան ինտեգրում Accu-Chek SmartGuide հավելվածի հետ

Գլյուկոզայի կանխատեսում

Predict հավելվածը հավաքում և օգտագործում է տեղեկատվություն Accu-Chek SmartGuide հավելվածից:

Ձեր գլյուկոզայի մակարդակի կանխատեսումը հաջորդ 2 ժամվա համար ցուցադրվում է, երբ Դուք պատշաճ կերպով կարգավորել եք Ձեր CGM սենսորը, և նվազագույնը 1 ժամվա անխափան CGM տվյալներ են փոխանցվել Accu-Chek SmartGuide հավելվածից այս հավելված:

Այս գործառույթի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Գլյուկոզայի կանխատեսում» գլուխը:

Ցածր գլյուկոզայի կանխատեսում

Հավելվածը հայտնաբերում և ծանուցում է Ձեզ 30 րոպեի ընթացքում հնարավոր ցածր գլյուկոզայի մասին: Լռելյայն, «Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցումը, որը Դուք ստանում եք, արդեն իսկ միացված է, երբ առաջին անգամ բացում եք այս հավելվածը: Դուք կարող եք անցնել «Մենյու»-ի «Ծանուցումների կարգավորումներ» բաժին՝ այն անջատելու համար: «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը դեռ կցուցադրվի հավելվածի Հիմնական Էկրանին:

«Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցումը ցուցադրվում է Ձեր հեռախոսի բլոկավորված Էկրանին: Սեղմե՛ք ծանուցման վրա՝ ավելի շատ մանրամասներ և գործողություններ տեսնելու համար, որոնք կարող եք ըստ ցանկության ընտրել:

«Ցածր գլյուկոզայի կանխատեսում» գործառույթն աշխատում է միայն այն դեպքում, երբ Ձեր ցածր գլյուկոզայի ազդանշանը Accu-Chek SmartGuide հավելվածում սահմանված է 60 մգ/դլ (3.3 մմոլ/լ) և 100 մգ/դլ (5.5 մմոլ/լ) միջակայքում: Այս ծանուցումը չի աշխատում, երբ Ձեր ցածր գլյուկոզայի ազդանշանը սահմանված է 100 մգ/դլ-ից (5.5 մմոլ/լ) բարձր:

Այս ծանուցման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Գլյուկոզայի կանխատեսում» գլուխը:

Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսում

Այս գործառույթը կանխատեսում է գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզ ունենալու Ձեր հավանականությունը՝ թույլ տալով Ձեզ որոշել, թե ինչ գործողություններ ձեռնարկել քնելուց առաջ:

Ցածր մակարդակ ունենալը նշանակում է, որ Ձեր գլյուկոզայի ցուցանիշը կարող է իջնել 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր:

Եթե Դուք ակտիվացնեք այս գործառույթը և միացնեք ծանուցումը, կարող եք ստանալ «Կանխատեսվում է գիշերային ցածր մակարդակ» ծանուցումը, եթե քնած ժամանակ ցածր գլյուկոզ ունենալու բարձր հավանականություն կա: Predict հավելվածին անհրաժեշտ է առնվազն 1 օրվա տվյալ՝ Ձեր հավանականությունը կանխատեսելու համար:

Դուք կարող եք նաև կարգավորել «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթը և ձեռքով հաշվարկ պահանջել:

Գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գլուխը:

Գլյուկոզայի օրինաչափություններ

Այս գործառույթը բացահայտում է կրկնվող գլիկեմիկ իրադարձություններ, որոնք տեղի են ունենում օրվա կամ շաբաթվա ընթացքում (Երկ-Կիր): Սա թույլ է տալիս Ձեզ ձեռնարկել գործնական քայլեր՝ Ձեր գլյուկոզայի մակարդակները թիրախային միջակայքում պահելու համար:

Երբ Predict հավելվածը ստանում է CGM տվյալներ Accu-Chek SmartGuide հավելվածից, վերջին 24 ժամվա ընթացքում հայտնաբերված օրինաչափությունները ցուցադրվում են Հիմնական Էկրանի գրաֆիկի տակ:

Օրինաչափությունները ցուցադրվում են ըստ առողջության համար ամենաբարձր ռիսկ պարունակողի հերթականության՝ սկսած վերևից, օրինակ՝ շատ ցածր կամ ցածր օրինաչափությունը: Բացի այդ, Դուք կարող եք հիշեցումներ սահմանել Ձեր հայտնաբերված օրինաչափություններից ցանկացածի համար:

Դուք շաբաթական կտրվածքով ստանում եք օրինաչափությունների ամփոփագիր՝ ամեն երկուշաբթի: Եվ Դուք եք որոշում՝ արդյոք ցանկանում եք ծանուցում ստանալ, երբ այդ ամփոփագիրը հասանելի կլինի:

«Գլյուկոզայի օրինաչափություններ» Էկրանի «Ընթացիկ» պատկերից՝

- Դիտեք բոլոր օրինաչափությունները, որոնք հայտնաբերվել են վերջին 2 շաբաթվա ընթացքում (անցյալ շաբաթվա երկուշաբթից մինչև Ձեր ընթացիկ ժամանակը): Կարող եք նաև տեսնել, թե որ օրինաչափությունների համար են հիշեցումներ սահմանված:
- Սեղմե՛ք հայտնաբերված օրինաչափության վրա՝ ավելի շատ տեղեկատվություն տեսնելու համար, ներառյալ Accu-Chek SmartGuide հավելվածի մատյանում առկա ածխաջրերի, ինսուլինի և արյան գլյուկոզայի հետ կապված գրառումները: Սեղմե՛ք օրինաչափության մեկ օրվա վրա՝ տվյալ օրվա մանրամասները և մատյանի տեղեկատվությունը տեսնելու համար:
- Կարգավորե՛ք ծանուցում ստանալը, երբ անցյալ շաբաթվա ամփոփագիրը հասանելի լինի:

«Գլյուկոզայի օրինաչափություններ» Էկրանի «Անցյալ» պատկերից՝

- Դիտեք այն օրինաչափությունները, որոնք այլևս չեն հայտնաբերվում՝ դասավորված ըստ վերջին ամսվա: 2 շաբաթից ավելի հին անցյալ օրինաչափությունները պահպանվում են առանձին՝ մինչև 6 ամիս:

Օրինաչափությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Գլյուկոզայի օրինաչափություններ» գլուխը:

Անհատականացվող ծանուցումներ

Կարգավորե՛ք ծանուցումներ գիշերային ցածր ցուցանիշներ ունենալու հավանականության և շաբաթական օրինաչափության ամփոփման համար: 30 րոպեի ընթացքում ցածր գլյուկոզայի մասին ծանուցումը միացված էլ լռելյայն:

Համապատասխանեցրե՛ք Ձեր անձնական կարիքներն և նախասիրություններն՝ կարգավորելով անհատականացված ծանուցումների գործառույթը: Դուք կարող եք «Մենյու»-ից մուտք գործել «Ծանուցումների կարգավորումներ»: Եթե որևէ խնդիր ունենաք, կարող եք նաև ստուգել Ձեր հեռախոսի օպերացիոն համակարգի կարգավորումները: Ծանուցումները պետք է միացված լինեն:

Հաշվետվության արտահանում

Ընտրե՛ք տվյալների երկշաբաթյա ժամանակահատվածը՝ Ձեր օրինաչափությունների և/կամ ամբուլատոր գլյուկոզայի պրոֆիլի (AGP) հաշվետվությունն արտահանելու համար: Ձեր հաշվետվության վերլուծությունը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ Ձեր անցյալ ընդհանուր գլիկեմիկ վիճակը: Այս պատմական գլյուկոզայի տեղեկատվությունն օգնում է Ձեզ ավելի լավ կառավարել Ձեր գլյուկոզայի մակարդակները ապագայում: Բացի այդ, Դուք կարող եք հեշտությամբ կիսվել հաշվետվությամբ Ձեզ բուժող բժշկի հետ:

Այս հաշվետվությունը ստեղծելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Հաշվետվության արտահանում» գլուխը:

Հիմնական Էկրան

Դիտեք Ձեր ամբողջ տեղեկատվությունը մի հայացքով: Բոլոր համապատասխան տվյալները, ինչպիսիք են Ձեր անցյալ և վերջին գլյուկոզայի ցուցանիշը և Ձեր գլյուկոզայի կանխատեսումը, ցուցադրվում են գրաֆիկում:

Ձեր «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» և «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը և վերջին 24 ժամվա ընթացքում հայտնաբերված օրինաչափությունները ցուցադրվում են Հիմնական Էկրանի գրաֆիկի տակ: Նկատի ունեցե՛ք, որ «Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցումը ցուցադրվում է միայն այն դեպքում, երբ ցածր գլյուկոզա ունենալու բարձր ռիսկ կա: «Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցումը սկզբնապես կհայտնվի Ձեր հեռախոսի բլոկավորված Էկրանին: Լռելյայն, այս ծանուցումն արդեն իսկ միացված է, երբ առաջին անգամ բացում եք այս հավելվածը:

Այս Էկրանի և հավելվածի նավիգացիոն տարրերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Հիմնական Էկրան» գլուխը:

Տվյալների փոխանցում


Predict հավելվածը փոխանցում է հավելվածում պահվող Ձեր գլյուկոզայի բոլոր ցուցանիշները Ձեր Accu-Chek օգտահաշիվ: Պահանջվում է ինտերնետ կապ:

Անխափան ինտեգրում Accu-Chek SmartGuide հավելվածի հետ

Քանի որ Accu-Chek SmartGuide հավելվածը և Predict հավելվածը կիսում են Ձեր դիաբետի տվյալները, Դուք կարող եք այս հավելվածից ուղղակիորեն անցնել Accu-Chek SmartGuide հավելված: Պարզապես Սեղմե՛ք Accu-Chek SmartGuide հավելվածի նշանին Ջիմնական Էկրանի վերին աջ անկյունում: Կարող եք նաև սեղմել Predict հավելվածի նշանին Accu-Chek SmartGuide հավելվածի Ջիմնական Էկրանից՝ Predict հավելված վերադառնալու համար:

Թե ինչպես է սա աշխատում, լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Accu-Chek SmartGuide հավելվածի կարգավորումը»:

3. Անվտանգության մասին ընդհանուր տեղեկատվություն

 ՆԱԽԱԶԳՈՒԾԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Լուրջ վնասի ռիսկ

- Խորհուրդ է տրվում չփոխել Ձեր ընդհանուր թերապիան, ինչպիսիք են ինսուլին-ածխաջուր գործակիցները, ինսուլինի սխեման կամ վարժությունների ինտենսիվությունը՝ հիմնվելով ցուցադրվող տվյալների վրա, առանց Ձեզ բուժող բժշկի հետ նախապես խորհրդակցելու: Եթե Ձեր սովորական թերապիայի վերաբերյալ հարցեր ունեք, կապվե՛ք Ձեզ բուժող բժշկի հետ:
- Ցանկացած անսպասելի գլյուկոզայի ցուցանիշի դեպքում, նախքան թերապիայի փոփոխությունները Ձեզ բուժող բժշկի հետ քննարկելը, խորհուրդ է տրվում կատարել հետևյալը.
 1. Համեմատե՛ք այս հավելվածում ցուցադրվող գլյուկոզայի ցուցանիշները Accu-Chek SmartGuide հավելվածի կողմից տրամադրված բնօրինակ գլյուկոզայի ցուցանիշի հետ:
 2. Եթե դեռ կասկածում եք, կատարե՛ք արյան գլյուկոզայի չափում Ձեր գլյուկոմետրով:
 - Եթե այս ամենից հետո էլ դեռ վստահ չեք հավելվածներում ցուցադրվող գլյուկոզայի մակարդակների վերաբերյալ, կապվե՛ք Ձեզ բուժող բժշկի հետ:
 - Predict հավելվածը կանխատեսումներ է անում՝ հիմնվելով Ձեր CGM տվյալների և գրանցված մուտքագրումների (ածխաջրեր և ինսուլին) վրա: Ցանկացած գործողություն, որը Դուք կարող եք ձեռնարկել հաջորդ երկու ժամվա ընթացքում (օրինակ՝ ուտել, ինսուլին ընդունել և մարզվել), հաշվի չի առնվում կանխատեսման մեջ: Նկատի ունեցեք, որ «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթի համար ժամանակահատվածը 2 ժամից ավելի է, քանի որ այն ընդգրկում է գիշերը:

4. Հավելվածի օգտագործումը

4.1 Հավելվածի օգտագործման նախապայմանները

Պահանջվող օգտահաշիվներ

- iOS սարքերում հավելվածը ներբեռնելու համար Ձեզ անհրաժեշտ է Apple ID:
- Android սարքերում հավելվածը ներբեռնելու համար Ձեզ անհրաժեշտ է Google օգտահաշիվ:
- Հավելվածը կարգավորելու համար Ձեզ անհրաժեշտ է Accu-Chek օգտահաշիվ:
- Accu-Chek օգտահաշիվ ստեղծելու համար Ձեզ անհրաժեշտ է անձնական էլեկտրոնային փոստի հասցե:

Համակարգի պահանջներ

Դուք կարող եք օգտագործել հավելվածը միայն այն դեպքում, եթե բավարարված են հետևյալ պահանջները.

- Դուք պետք է օգտագործեք Accu-Chek SmartGuide CGM սենսորը և հավելվածը:
- Գլուկոզայի կանխատեսումները և հավելվածի ծանուցումները ստանալու համար Ձեր հեռախոսը պետք է միացված լինի ինտերնետին:
- Հավելվածի iOS տարբերակը պահանջում է iOS 15.3 կամ ավելի բարձր տարբերակ:
- Հավելվածի Android տարբերակը պահանջում է Android 11 կամ ավելի բարձր տարբերակ:

Նախքան Ձեր հեռախոսը նոր OR տարբերակի թարմացնելը, համոզվե՛ք, որ հավելվածը համատեղելի է նոր OR տարբերակի հետ: Կասկածի դեպքում ստուգե՛ք համատեղելի սարքերի ցանկը՝ <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>: Եթե դեռ օգնության կարիք ունեք, կապվե՛ք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: Խորհուրդ է տրվում թարմացնել Ձեր հավելվածը և/կամ Ձեր հեռախոսի օպերացիոն համակարգը, հենց որ թարմացումը հասանելի դառնա Ձեզ:

Ցանցային պահանջներ

Հավելվածը պահանջում է հետևյալ թույլտվությունները.

- Անվտանգ ինտերնետ կապ՝ տվյալները Ձեր Accu-Chek օգտահաշվի և Roche Diabetes Care-ի cloud հետ կիսելու համար: Միացրե՛ք Ձեր հեռախոսը միայն հայտնի, վստահելի և անվտանգ Wi-Fi® և բջջային ցանցերին:

Բրաուզերի պահանջներ

Accu-Chek օգտահաշիվ ստեղծելու և հավելված մուտք գործելու համար Ձեզ անհրաժեշտ է բրաուզեր: Եթե արդեն տեղադրված բրաուզեր չունեք, պետք է նախ այն ներբեռնեք:

Այս հավելվածը համատեղելի է Android սարքերի հետևյալ բրաուզերների հետ.

- Google Chrome
- Mozilla Firefox
- Mozilla Firefox Focus
- Microsoft Edge
- Samsung Internet

Այս հավելվածը համատեղելի է iOS սարքերի Safari բրաուզերի հետ:

4.2 Ծրագրի թարմացված տարբերակներ

Բջջային հավելվածի վերջին թարմացված տարբերակները տեսնելու համար այցելե՛ք App Store կամ Google Play հարթակներ:

5. Ինչպես սկսել

5.1 Հավելվածի տեղադրումը և ապատեղադրումը

Տեղադրեք հավելվածը

Նախ պետք է ներբեռնեք հավելվածը Ձեր հեռախոսի մեջ: Դուք կարող եք ներբեռնել հավելվածը հետևյալ հարթակներից.

- App Store` iOS օգտատերերի համար
- Google Play` Android օգտատերերի համար

Ներբեռնե՛ք հավելվածը և տեղադրե՛ք այն Ձեր հեռախոսի վրա: Ձեր հեռախոսի վրա հավելվածներ տեղադրելու մասին տեղեկատվությունը պարունակվում է Ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկում, ինչպես նաև App Store-ում կամ Google Play-ում:

Ապատեղադրեք հավելվածը

Ձեր հեռախոսից հավելվածներ ապատեղադրելու (ջնջելու) մասին տեղեկատվությունը պարունակվում է Ձեր հեռախոսի Օգտագործողի ձեռնարկում, ինչպես նաև App Store-ում կամ Google Play-ում:

5.2 Մուտք Predict հավելված

Երբ ներբեռնել և տեղադրել եք հավելվածը, պատրաստ եք բացել այն և մուտք գործել:

Հավելված մուտք գործելու համար Ձեզ անհրաժեշտ է բրաուզեր: Եթե արդեն տեղադրված բրաուզեր չունեք, պետք է նախ այն ներբեռնեք:

1. Սեղմե՛ք հավելվածի նշանին:
2. Ցուցադրվում են ներածական Էկրանները: Սահեցրե՛ք ձախ՝ Էկրանները դիտելու համար:
3. Մուտք գործե՛ք հավելված նույն օգտանունով և գաղտնաբառով, ինչ Ձեր Accu-Chek հաշվի համար:
4. Accu-Chek օգտահաշիվ չունե՞ք: Սեղմե՛ք «Ստեղծել օգտահաշիվ» և հետևե՛ք Էկրանի հրահանգներին:

5.3 Accu-Chek SmartGuide հավելվածի կարգավորումը

Եթե Accu-Chek SmartGuide հավելվածը կարգավորված է, Predict հավելվածն ստանում է CGM տվյալներ ինքնաշխատ եղանակով:

Եթե տվյալների փոխանցումը հաջող է, Դուք կհայտնվեք Հիմնական Էկրանին: Հավելվածի բաժիններ մուտք գործեք ներքևի նավիգացիայից:

Accu-Chek SmartGuide հավելվածը տեղադրված չէ՞: Սեղմե՛ք «Անցնել հավելված», և Դուք կուղղորդվեք Ձեր հավելվածների խանութ: Կարող եք նաև

սեղմել Accu-Chek SmartGuide հավելվածի նշանին Յիմնական Էկրանի վերին աջ անկյունում:

Ձեր սենսորը դեռ զուգակցված չէ՞: Սեղմե՛ք «Անցնել հավելված», և Accu-Chek SmartGuide հավելվածը կբացվի: Յետևե՛ք հրահանգներին՝ Ձեր սենսորը զուգակցելու համար:

Predict հավելվածին անհրաժեշտ են պարբերաբար թարմացվող գլյուկոզայի ցուցանիշներ՝ ամենաճշգրիտ կանխատեսումը տրամադրելու համար: Սեղմե՛ք «Յամաժամեցնել հիմա»՝ Ձեր CGM տվյալները փոխանցելու համար:

Յավելվածը տեղադրված և միացված է, բայց ինչ-որ բան սխա՞լ է գնացել:

- Դուք պետք է մուտք գործած լինեք Ձեր Accu-Chek օգտահաշիվ և եթե դուրս գաք, չեք ստանա գլյուկոզայի ցուցանիշներ կամ ծանուցումներ: Դուք օգտագործում եք Ձեր նույն Accu-Chek օգտահաշվի մուտքի տվյալները՝ և՛ Accu-Chek SmartGuide, և՛ Predict հավելվածներ մուտք գործելու համար:
- **Բավարար տվյալներ չկան:** Ստուգե՛ք, որ Ձեր CGM սենսորը և Accu-Chek SmartGuide հավելվածը ճիշտ են աշխատում: Նվազագույնը 1 ժամվա անխափան CGM տվյալների փոխանցում է պահանջվում, որպեսզի Predict հավելվածը կարողանա տրամադրել Ձեզ Ձեր սկզբնական գլյուկոզայի կանխատեսումը հաջորդ 2 ժամվա համար:
- **Ժամանակն է փոխարինել Ձեր սենսորը:** Վերադարձե՛ք Accu-Chek SmartGuide հավելված և հետևե՛ք հրահանգներին՝ Ձեր սենսորը փոխարինելու համար:
- **CGM տվյալները հասանելի չեն:** Տվյալները չեն ցուցադրվում Յիմնական Էկրանի գրաֆիկում: Վերադարձե՛ք Accu-Chek SmartGuide հավելված՝ խնդիրը լուծելու համար: Սեղմե՛ք Accu-Chek SmartGuide հավելվածի նշանին Յիմնական Էկրանի վերին աջ անկյունում:

6. Ձեր հեռախոսի կարգավորումը

6.1 Ընդհանուր պահանջներ

Սարքի խնամք

Մի՛ օգտագործեք հավելվածը ճաքած կամ վնասված Էկրանով հեռախոսի վրա: Եթե Էկրանը ճաքած կամ վնասված է, հնարավոր է՝ չկարողանաք տեսնել այն ամենը, ինչ ցուցադրվում է: Օգտագործե՛ք հավելվածը միայն պատշաճ գործող հեռախոսի վրա:

6.2 Հասանելիության պաշտպանություն

Տվյալների պաշտպանություն

Պաշտպանե՛ք Ձեր հավելվածի տվյալները չարտոնված մուտքից կամ չարաշահումից: Օգտագործե՛ք Ձեր հեռախոսի կամ օպերացիոն համակարգի անվտանգության գործառույթները, օրինակ՝ գաղտնաբառի պաշտպանությունը:

Ձեր գլուկոզայի բոլոր տվյալները գաղտնագրված և պաշտպանված են նաև Ձեր Accu-Chek օգտահաշվում՝ Roche Diabetes Care-ի cloud-ում:

Roche-ի կողմից Ձեր անձնական տվյալների հավաքագրման և օգտագործման մասին տեղեկությունների համար՝

- Սեղմե՛ք Մենյու > Օգտահաշիվ > Գաղտնիության կարգավորումներ
- Սեղմե՛ք Մենյու > Օգտահաշիվ > Կառավարել օգտահաշիվը

Հեռախոսի պաշտպանություն

- Պաշտպանե՛ք հավելվածը երրորդ կողմի մուտքից: Թույլ տվեք մուտքը միայն վստահելի օգտատերերի:
- Մի՛ տվեք Ձեր հեռախոսն ուրիշներին, այդ թվում՝ երեխաներին:
- Սահմանե՛ք Էկրանի կողպեք Ձեր հեռախոսի անվտանգության կարգավորումներում:
- Կարգավորե՛ք Էկրանի կողպեքը, որպեսզի այն ինքնաշխատ եղանակով բլոկավորի Ձեր հեռախոսը որոշակի ժամանակահատված անգործությունից հետո:


Օգտահաշվի պաշտպանություն

- Պահե՛ք Ձեր Accu-Chek օգտահաշվի տեղեկատվությունը գաղտնի: Մի՛ կիսվեք Ձեր օգտահաշվի տվյալներով ուրիշների հետ, եթե նրանք Ձեր խնամողները չեն:
- Պաշտպանե՛ք Ձեր հեռախոսը ծրագրային ապահովման փոփոխություններից: Համոզվե՛ք, որ հավելվածների խանութից (օրինակ՝ App Store կամ Google Play) տեղադրումների համար պահանջվում է գաղտնաբառ:
- Ձեր Apple կամ Google հաշվի գաղտնաբառի կարգավորումները փոխելու մասին տեղեկությունների համար տե՛ս Ձեր ներքեռնման հարթակի հրահանգները:

- Ձեր Accu-Chek օգտահաշվի գաղտնաբառի կարգավորումները փոխելու համար անցե՛ք Մենյու > Օգտահաշիվ > Կառավարել օգտահաշիվը:

Ձեր հեռախոսի կարգավորման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Accu-Chek SmartGuide հավելվածի Օգտագործողի ձեռնարկի «Ձեր հեռախոսի կարգավորումը» գլուխը:

7. Հիմնական Էկրան



Հիմնական Էկրանը հավելվածի կենտրոնն է և բաժանված է 5 մասի: Այս լռելյայն Էկրանը ցուցադրում է հետևյալը.

1. **Accu-Chek SmartGuide հավելվածի** նշան: Սեղմել՝ք այս նշանին՝ Accu-Chek SmartGuide հավելվածի Հիմնական Էկրան անցնելու համար: Ձեր Predict հավելվածը կմնա բաց:

2. **Տեղեկատվության նշան (i)**: Սեղմե՛ք այս նշանին՝ ավելին իմանալու համար, թե ինչպես է գրաֆիկը ցուցադրում Ձեր գլուկոզայի կանխատեսումը:
3. **Գրաֆիկ**: Ցույց է տալիս Ձեր գլուկոզայի մակարդակները նախորդ ժամվա ընթացքում, ինչպես դրանք կան հիմա, և դրանց կանխատեսվող միջակայքը հաջորդ 2 ժամվա համար: Կանխատեսվող միջակայքի կետգիծը ներկայացնում է Ձեր կանխատեսվող միջին գլուկոզայի ցուցանիշը: Ձեր կանխատեսվող գլուկոզայի միջակայքի ճշգրտությունը նվազում է, որքան հեռու է այն ժամանակի մեջ, ինչպես ցույց են տալիս ընդլայնվող ուղղահայաց գծերը: Եթե ստանաք կանխատեսման սխալի հաղորդագրություններ, դրանք կգտնեք գրաֆիկի տարածքում:
4. **Ընթացիկ գլուկոզայի մակարդակը**՝ համապատասխան չափման միավորով:
5. **Հաղորդագրությունների տարածք**: Կարևոր տեղեկատվությունը, ինչպիսիք են գիշերային ցածր մակարդակի և 30 բոպեի ընթացքում ցածր գլուկոզայի հավանականությունը, ցուցադրվում է այստեղ՝ գրաֆիկի անմիջապես տակ: Եթե հավելվածը որևէ օրինաչափություն հայտնաբերի Ձեր գլուկոզայի մակարդակներում, դրանք նույնպես կհայտնվեն այստեղ:

7.1 Նավիգացիոն տարրեր

Չետևյալ նավիգացիոն տարրերը ցուցադրվում են Էկրանի **վերին** մասում.

- : Սեղմե՛ք՝ նախորդ Էկրան վերադառնալու համար:
- : Սեղմե՛ք՝ Էկրանը փակելու համար:

Չետևյալ նավիգացիոն տարրերը ցուցադրվում են Էկրանի **ստորին** մասում.

Նշանները ընդգծված են կապույտով՝ ցույց տալու համար հավելվածի այն բաժինը, որը դիտում եք:

- **Տան** նշան: Սեղմե՛ք՝ Հիմնական Էկրան մուտք գործելու համար:
- **Օրինաչափությունների նշան**: Սեղմե՛ք՝ «Գլուկոզայի օրինաչափություններ» Էկրան մուտք գործելու համար:
- **Մենյուի նշան**: Սեղմե՛ք՝ լրացուցիչ մենյուի բաժին ընտրություն կատարելու համար: Մենյու դաշտը ներառում է՝ Միացումներ, Օգտահաշիվ, Ծանուցումների կարգավորումներ, Հաշվետվության արտահանում, Օգտագործողի ձեռնարկ, Արտադրանքի տեղեկատվություն և Կապ մեզ հետ:

8. ԳՅՈՒԿՈՂԱՅԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հավելվածը կանխատեսում է, թե ուր կարող են գնալ Ձեր գլյուկոզայի մակարդակները հաջորդ 2 ժամվա ընթացքում: Այս կանխատեսումը հիմնված է Ձեր անցյալ CGM տվյալների և Accu-Chek SmartGuide հավելվածի մատյանում Ձեր ածխաջրերի և ինսուլինի մուտքագրումների վրա:

Գլյուկոզայի կանխատեսումը ցուցադրվում է Հիմնական Էկրանի գրաֆիկում, երբ առնվազն 1 ժամվա անխափան CGM տվյալներ հաջողությամբ փոխանցվում են հավելված:

Գրաֆիկը ցույց է տալիս Ձեր գլյուկոզայի մակարդակները նախորդ ժամվա ընթացքում, ինչպես դրանք կան հիմա, և դրանց կանխատեսվող միջակայքը հաջորդ 2 ժամվա համար: Կանխատեսվող միջակայքի կետգիծը ներկայացնում է Ձեր կանխատեսվող միջին գլյուկոզայի ցուցանիշը:

Ձեր կանխատեսվող գլյուկոզայի միջակայքի ճշգրտությունը նվազում է, որքան հեռու է այն ժամանակի մեջ, ինչպես ցույց են տալիս ընդլայնվող ուղղահայաց գծերը:

Հիշե՛ք, որ ցուցադրվող ապագա գլյուկոզայի ցուցանիշը կանխատեսումներ են, որոնք կարող են տարբերվել իրական ցուցանիշից և չեն ազդում Accu-Chek SmartGuide հավելվածի «Միտումների ռեժիմի» կամ «Թերապիայի ռեժիմի» ընթացիկ կարգավիճակի վրա: «Միտումների ռեժիմը» ցույց է տալիս, որ Accu-Chek SmartGuide հավելվածում ցուցադրվող տվյալները պետք է օգտագործվեն միայն միտումները տեսնելու և որպես ընդհանուր ուղեցույց: Միայն «Թերապիայի ռեժիմում» ցուցադրվող տվյալները կարող են օգտագործվել թերապիայի որոշումներ կայացնելու համար:

Գրաֆիկում ցուցադրվող միջակայքը 0-ից 300 մգ/դլ է (0–16.7 մմոլ/լ): Եթե Ձեր ցուցանիշը 300 մգ/դլ-ից (16.7 մմոլ/լ) բարձր է, այն կնշվի վերև ուղղված եռանկյունով, և հավելվածը կցուցադրի HI՝ թվային ցուցանիշի փոխարեն, եթե Ձեր ցուցանիշը 400 մգ/դլ-ից (22 մմոլ/լ) բարձր է: Եթե Ձեր ցուցանիշը 40 մգ/դլ-ից (2.2 մմոլ/լ) ցածր է, այն կնշվի ներքև ուղղված եռանկյունով, և հավելվածը կցուցադրի LO՝ թվային ցուցանիշի փոխարեն:

Եթե Ձեր կանխատեսվող գլյուկոզան միտում ունի դեպի ցածր մակարդակ, և եթե հայտնվում է «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը, գրաֆիկում ցուցադրվում են միայն հաջորդ 30 րոպեի գլյուկոզայի ցուցանիշը: Եթե Ձեր կանխատեսվող գլյուկոզան 30 րոպեի ընթացքում չի հասնում ցածր մակարդակի, ապա գրաֆիկում կանխատեսման ցուցանիշները չեն ցուցադրվում, և հայտնվում է միայն «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը:

Հիշե՛ք հետևյալը՝ Ձեր կանխատեսումը դիտելիս.

- Predict հավելվածը կանխատեսումներ է անում՝ հիմնվելով Ձեր CGM տվյալների և գրանցված ածխաջրերի ու ինսուլինի վրա: Ցանկացած գործողություն, որը Դուք

կարող եք ձեռնարկել հաջորդ երկու ժամվա ընթացքում (օրինակ՝ ուտել, ինսուլին ընդունել և մարզվել), հաշվի չի առնվում կանխատեսման մեջ:

- 2-ժամյա կանխատեսումը միայն տեղեկատվական բնույթ է կրում այն դեպքերում, երբ կանխատեսումը 45 րոպեից ավելիի համար է, և նպատակ ունի Ձեզ տեղեկացնել ապագա գործողությունների մասին, որոնք կարող են անհրաժեշտ լինել (օրինակ՝ ավելի հաճախ ստուգել Ձեր գլյուկոզան, պատրաստել ինսուլինի ներարկումներ կամ ածխաջրեր ունենալ ձեռքի տակ): Հաջորդ 45 րոպեի ընթացքում բարձր և ցածր գլյուկոզայի կանխատեսումների դեպքում Դուք պետք է մտածեք, թե ինչ գործողություններ պետք է ձեռնարկեք:

8.1 Գլյուկոզայի կանխատեսման սխալի մասին հաղորդագրություններ

Դուք կստանաք հետևյալ սխալի մասին հաղորդագրություններից մեկը, երբ Ձեր Հիմնական Էկրանին գլյուկոզայի կանխատեսում չկա:

<p>Սխալի մասին հաղորդագրություն</p>	<p>Գործողություն</p>
<p>Ձեր գլյուկոզան կանխատեսելու համար մեզ անհրաժեշտ է առնվազն 1 ժամվա CGM տվյալ:</p>	<p>Սպասե՛ք 1 ժամ, որպեսզի Ձեր գլյուկոզայի կանխատեսումը հայտնվի:</p>
<p>Մենք չենք կարող կանխատեսել Ձեր գլյուկոզան, քանի դեռ այն 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր է:</p>	<p>Մենք չենք կարող կանխատեսում տրամադրել, քանի դեռ Ձեր գլյուկոզայի մակարդակը ցածր է: Ձեր գլյուկոզայի մակարդակը 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) բարձրացնելու համար կերե՛ք կամ խմե՛ք որևէ շաքար պարունակող սնունդ՝ ըստ Ձեզ բուժող բժշկի խորհրդի: (Ներկայացված ցուցանիշը միայն օրինակ է: Ձեր Ցածր գլյուկոզայի սահմանը կարող է տարբերվել):</p>

<p>Մենք չենք կարողանում կանխատեսել Ձեր գլյուկոզան: Խնդրում ենք փորձել ավելի ուշ:</p>	<p>Մենք չկարողացանք կանխատեսել Ձեր գլյուկոզան: Խնդրում ենք վերադառնալ ավելի ուշ: Եթե սխալը շարունակում է հայտնվել, կապվե՛ք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:</p>
--	--

8.2 Ցածր գլյուկոզայի կանխատեսում

«Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը ցուցադրվում է Հիմնական Էկրանին, երբ այս հավելվածը հայտնաբերում է, որ 30 րոպեի ընթացքում Դուք ցածր գլյուկոզա կունենաք: Ցածր գլյուկոզան կարող է առաջանալ հաջորդ 30 րոպեի ցանկացած պահի: Ցածր մակարդակ ունենալը նշանակում է, որ Ձեր գլյուկոզայի ցուցանիշը կարող է իջնել Ձեր կողմից Accu-Chek SmartGuide հավելվածում գլյուկոզայի ազդանշանների համար սահմանված Ցածր գլյուկոզայի սահմանից ցածր: Ձեր գլյուկոզայի միջակայքերը սահմանելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Accu-Chek SmartGuide հավելվածի Օգտագործողի ձեռնարկի «Ինչպես սկսել» գլուխը: Եթե 30 րոպեի ընթացքում ցածր մակարդակի անցնելու բարձր հավանականություն կա, և Դուք միացրել եք ծանուցումները, «Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցումը կցուցադրվի կա՛մ Ձեր հեռախոսի բլոկավորված Էկրանին, կա՛մ երբ Դուք սահեցնեք ներքև Ձեր Էկրանի վերևից՝ կախված նրանից, թե ինչպես եք կարգավորել Ձեր հեռախոսը: Սեղմե՛ք «Շուտով ցածր գլյուկոզա» ծանուցման վրա՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» Էկրանին: Կարդացե՛ք խորհուրդները և որոշե՛ք, թե ինչ գործողությունս պետք է ձեռնարկել հաջորդիվ:

8.3 Ցածր գլյուկոզայի կանխատեսման բացառություններ

«Ցածր գլյուկոզայի կանխատեսում» գործառույթն ակտիվ է օրը 24 ժամ, շաբաթը 7 օր, հետևյալ բացառություններով.

- Ձեր ցածր գլյուկոզայի ազդանշանը Accu-Chek SmartGuide հավելվածում սահմանված է 60 մգ/դլ-ից (3.3 մմոլ/լ) ցածր կամ 100 մգ/դլ-ից (5.5 մմոլ/լ) բարձր: Այս ծանուցումը չի աշխատում, երբ Ձեր ցածր գլյուկոզայի ազդանշանը սահմանված է 100 մգ/դլ-ից (5.5 մմոլ/լ) բարձր:
- Ձեր վերջին ածխաջրերի ընդունումից անցել է 20 րոպե:
- Վերջին կանխատեսումից և վերջին ծանուցումն ուղարկելուց անցել է 30 րոպե:
- Ձեր գլյուկոզայի ցուցանիշն արդեն իսկ ցածր է Ձեր կողմից Accu-Chek SmartGuide հավելվածում գլյուկոզայի ազդանշանների համար սահմանված Ցածր գլյուկոզայի սահմանից: Ձեր գլյուկոզայի սահմանները սահմանելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Accu-Chek SmartGuide հավելվածի Օգտագործողի ձեռնարկի «Ինչպես սկսել» գլուխը: Ձեր «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը Հիմնական Էկրանից կանհետանա 15 րոպե հետո:

9. Գիշերային գլյուկոզայի ցածր մակարդակի կանխատեսում

«Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթը քնելուց առաջ Ձեզ տեղեկացնում է գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու Ձեր հավանականության մասին, ինչպես նաև տրամադրում է այն ժամանակահատվածը, որի ընթացքում ցածր մակարդակի ռիսկն ամենայն հավանականությամբ կառաջանա: Կանխատեսումը հասանելի է երեկոյան 9-ից մինչև առավոտյան 2-ը: Ցածր մակարդակ ունենալը նշանակում է, որ Ձեր գլյուկոզայի ցուցանիշը կարող է իջնել 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր: «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթն աշխատում է 70 մգ/դլ (3.9 մմոլ/լ) ֆիքսված ցածր շեմով, որն անկախ է Accu-Chek SmartGuide հավելվածից: Գիշերը սահմանվում է որպես 7-ժամյա ժամանակահատված, որը հաշվարկվում է կանխատեսման հաշվարկման պահից: Դուք կարող եք կարգավորել «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթը և ձեռքով պահանջել Նոր հաշվարկ՝ երեկոյան 9-ից մինչև առավոտյան 2-ն ընկած ցանկացած ժամանակահատվածի համար: Դուք կարող եք նաև ծանուցում ստանալ բարձր ռիսկի ընտրված ժամերին (Ձեր Նորմալ ռիսկից զգալիորեն բարձր): Եթե գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու բարձր հավանականություն կա, և ծանուցումները միացված են, «Կանխատեսվում է գիշերային ցածր մակարդակ» ծանուցումը կհայտնվի Ձեր հեռախոսի բլոկավորված Էկրանին: «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» պատկերը կարելի է տեսնել այս հավելվածի Հիմնական Էկրանի գրաֆիկի տակ: Այս ծանուցումը կառավարելու համար անցե՛ք Մենյու > Ծանուցումների կարգավորումներ: Սեղմե՛ք ծանուցման կամ պատկերի վրա՝ գրաֆիկական կանխատեսումը «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» Էկրանին տեսնելու համար: Գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու հավանականությունը բաժանված է 3 տարբեր ռիսկի մակարդակների, որոնցից յուրաքանչյուրը ներկայացված է տարբեր գույնով.

- **Նորմալ** — 30%-ից պակաս (կանաչ)
- **Բարձր** — 30–60% միջակայքում (դեղին)
- **Շատ բարձր** — 60%-ից բարձր (կարմիր)



Անկախ նրանից, թե գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու Ձեր հավանականությունը նորմալ է, բարձր, թե շատ բարձր, մտածե՛ք, թե ինչ գործողություններ եք ձեռնարկելու: Նույնիսկ նորմալ ռիսկը դեռ ռիսկ է, ուստի ցանկացած անհրաժեշտ գործողություն պետք է դիտարկվի: «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» Էկրանը նաև ցուցադրում է հետևյալ խորհուրդները, երբ գիշերվա ընթացքում ցածր գլյուկոզա ունենալու բարձր կամ շատ բարձր հավանականություն կա.

- Ածխաջրերով հարուստ նախուտեստները պահե՛ք Ձեր մահճակալի մոտ:
- Դիտարկե՛ք գիշերը բազալ ինսուլինի ավելի քիչ միավորներ ներարկելու հնարավորությունը:
- Կերե՛ք սպիտակուցներով կամ ճարպերով հարուստ որևէ սնունդ:

Դուք կարող եք ձեռքով պահանջել ցածր գլյուկոզ աուներնալու Ձեր հավանականության հաշվարկ յուրաքանչյուր 20 րոպեն մեկ, քանի դեռ Ձեր վերջին սննդի ընդունումից և/կամ ինսուլինի ներարկումից անցել է 20 րոպե, հետևյալ բացառություններով.

- Ձեր գլյուկոզայի ցուցանիշն արդեն իսկ 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր է կամ Ձեր Ցածր գլյուկոզայի սահմանից ցածր (եթե 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) բարձր է):
- Ձեր գլյուկոզայի կանխատեսումը կամ «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը ցույց է տվել, որ ձեր գլյուկոզայի մակարդակը շուտով կիջնի 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր: Ձեր գլյուկոզայի ցուցանիշը կարող է տարբերվել այստեղ ցուցադրվող գլյուկոզայի ցուցանիշից, քանի որ այս տվյալը հիմնված է Ձեր կողմից Accu-Chek SmartGuide հավելվածում ձեր գլյուկոզայի ազդանշանների համար սահմանված Ցածր գլյուկոզայի ցուցանիշի վրա:

9.1 Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսման սխալի մասին հաղորդագրություններ

Երբ Ձեր գիշերայի հիպոգլիկեմիայի կանխատեսումը չի կարող տրամադրվել, կարդացե՛ք հետևյալը՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչու, և ինչ հնարավոր գործողություններ ձեռնարկել: Ձեր գլյուկոզայի ցուցանիշները կարող են տարբերվել այստեղ ցուցադրվածից:

Սխալի մասին հաղորդագրություն	Գործողություն
Ինչ-որ բան սխալ է ընթանում	Մեր ծառայությունը կարող է անհասանելի լինել: Եթե «Կրկին փորձել»-ը չի աշխատում, սպասե՛ք մի քանի րոպե: Եթե սխալը շարունակում

	<p>Է հայտնվել, կապվե՛ք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ:</p>
<p>Դեռ հասանելի չէ</p>	<p>Չափազանց վաղ է հաշվարկել, թե արդյոք գիշերը կարող եք ցածր գլյուկոզա ունենալ: Դուք պետք է վերադառնաք երեկոյան 9-ից մինչև առավոտյան 2-ն ընկած ժամանակահատվածում: «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» գործառույթն աշխատում է միայն այս ժամանակահատվածում:</p>
<p>Բավարար տվյալներ չկան</p>	<p>Համոզվե՛ք, որ CGM սենսորը կրում եք առնվազն 1 օր: Մեզ անհրաժեշտ է առնվազն 1 օրվա տվյալ՝ գիշերվա ընթացքում գլյուկոզայի ցածր ցուցանիշներ ունենալու Ձեր հավանականությունը կանխատեսելու համար:</p>
<p>Հայտնաբերվել է ածխաջրի կամ ինսուլինի ընդունում</p>	<p>Եթե Accu-Chek SmartGuide հավելվածի մատյանում ածխաջրի կամ ինսուլինի մուտքագրում է կատարվել, ապա այս հավելվածին անհրաժեշտ է առնվազն 20 րոպե՝ նոր մուտքագրումը վերլուծելու և գիշերվա ընթացքում գլյուկոզայի ցածր ցուցանիշներ ունենալու հավանականությունը վերահաշվարկելու համար:</p>
<p>Ձեր գլյուկոզայի մակարդակը պատրասվում է նվազել</p>	<p>Այս հաղորդագրությունը ցուցադրվում է, եթե Ձեր գլյուկոզայի կանխատեսումը կամ Ձեր «Ցածր գլյուկոզայի կանխատեսում» պատկերը ցույց է տալիս, որ Ձեր գլյուկոզայի ցուցանիշը կանխատեսվում է իջնել 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր: (Ներկայացված ցուցանիշը միայն օրինակ է:</p>

	Ձեր Ցածր գլուկոզայի սահմանը կարող է տարբերվել):
Դուք 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր եք	Այս հավելվածը չի կարող կանխատեսել ցածր գլուկոզայի ցուցանիշն, երբ Ձեր գլուկոզայի մակարդակն արդեն ցածր է: Կերե՛ք կամ խմե՛ք որևէ շաքար պարունակող սնունդ՝ ըստ Ձեզ բուժող բժշկի խորհրդի: (Ներկայացված ցուցանիշը միայն օրինակ է: Ձեր Ցածր գլուկոզայի սահմանը կարող է տարբերվել):
Ինչ-որ բան սխալ գնաց	Մենք չկարողացանք կանխատեսել Ձեր գլուկոզան, երբ փորձեցիք հաշվարկել Ձեր ռիսկը: Խնդրում ենք վերադառնալ ավելի ուշ:
Դուք համացանցին միացած ե՞ք	Այս հավելվածն օգտագործելու համար համոզվե՛ք, որ Ձեր հեռախոսը միացված է ինտերնետին:

9.2 Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսման ծանուցման ակտիվացում

1. Սեղմե՛ք «Ակտիվացնել»՝ «Գիշերային ցածր մակարդակի կանխատեսում» պատկերի վրա:
2. Սեղմե՛ք «Հաջորդ» և միացրե՛ք ծանուցման փոխարկման կոճակը:
3. Մուտքագրե՛ք ժամը և Սեղմե՛ք «Կատարված է»: Ընտրե՛ք ժամանակ, որը առնվազն 30 րոպե ուշ է Ձեր օրվա վերջին սննդի և ինսուլինի ընդունումից և քնելուց առաջ:

Հաստատման Էկրանը ցուցադրվում է: Սեղմե՛ք «OK»:

10. Գլյուկոզայի օրինաչափություններ

Այս գործառույթը բացահայտում է կրկնվող գլիկեմիկ իրադարձություններ, որոնք տեղի են ունենում օրվա կամ շաբաթվա ընթացքում (Երկ-Կիր): Ամեն օր Ձեր վերջին 24 ժամվա հայտնաբերված օրինաչափությունները ցուցադրվում են Հիմնական Էկրանի գրաֆիկի տակ: Պատկերվում են և՛ թիրախային միջակայքում, և՛ դրանից դուրս օրինաչափությունները: Ձեր թիրախային միջակայքից դուրս օրինաչափությունները դիտելը թույլ է տալիս Ձեզ ձեռնարկել գործնական քայլեր՝ դրանք ապագայում կանխելու համար: Օրինաչափությունները ցուցադրվում են ըստ առողջության համար ամենաբարձր ռիսկ պարունակողի հերթականության՝ սկսած վերևից, օրինակ՝ շատ ցածր կամ ցածր օրինաչափությունը: Դուք կարող եք նաև հիշեցումներ սահմանել Ձեր հայտնաբերված օրինաչափություններից ցանկացածի համար: Ամեն երկուշաբթի հավելվածը ցույց է տալիս նախորդ շաբաթ հայտնաբերված բոլոր օրինաչափությունների ամփոփագիրը: Այս ամփոփագրի պատրաստ լինելու մասին ծանուցում ստանալու համար տե՛ս «Շաբաթական ամփոփագրի ծանուցման ակտիվացում»: Սեղմե՛ք «Օրինաչափություններ» նշանին ներքևի նավիգացիայից՝ հետևյալը կատարելու համար.

«Գլյուկոզայի օրինաչափություններ» Էկրանի «Ընթացիկ» պատկերից

- Դիտեք հայտնաբերված օրինաչափությունները և այն օրինաչափությունները, որոնց համար հիշեցումներ են սահմանվել:
- Սեղմե՛ք հայտնաբերված օրինաչափության վրա՝ ավելի շատ տեղեկատվություն տեսնելու համար, ներառյալ Accu-Chek SmartGuide հավելվածի մատյանում առկա ածխաջրերի, ինսուլինի և արյան գլյուկոզայի հետ կապված գրառումները: Սեղմե՛ք օրինաչափության մեկ օրվա վրա՝ տվյալ օրվա մանրամասները և մատյանի տեղեկատվությունը տեսնելու համար:
- Կարգավորե՛ք ծանուցում ստանալը, երբ անցյալ շաբաթվա ամփոփագիրը հասանելի լինի:

«Գլյուկոզայի օրինաչափություններ» Էկրանի «Անցյալ» պատկերից

- Դիտեք այն օրինաչափությունները, որոնք այլևս չեն հայտնաբերվում՝ դասավորված ըստ վերջին ամսվա: 2 շաբաթից ավելի հին անցյալ օրինաչափությունները պահպանվում են առանձին՝ մինչև 6 ամիս:

Երբ առաջին անգամ դիտում եք «Գլյուկոզայի օրինաչափություններ» Էկրանը, ցուցադրվում է ընդհանուր տեսություն: Կարդացե՛ք Էկրանները՝ ավելի լավ հասկանալու համար, թե ինչպես է գործառույթն աշխատում:

10.1 Գլյուկոզայի օրինաչափությունների տեսակները





Այս գլխի աղյուսակներում թվարկված են հնարավոր օրինաչափությունները և դրանց հետ կապված ժամանակահատվածը, որոնք կարող են հայտնաբերվել Ձեր CGM տվյալներից: Առաջին աղյուսակը ցուցադրում է ժամանակահատվածները և դրանց սկզբի ու ավարտի ժամերը:

Ժամանակահատված	Սկզբի ժամ	Ավարտի ժամ	Ժամային գոտի
Գիշեր	00:00	06:00	Տեղական ժամանակ
Առավոտ	06:00	10:00	Տեղական ժամանակ
Ցերեկ	10:00	20:00	Տեղական ժամանակ
Էրեկո	20:00	00:00	Տեղական ժամանակ
Ամբողջ օր	00:00	00:00	Տեղական ժամանակ

Օրինաչափության համար ցուցադրվող ժամանակը արտացոլում է Ձեր տեղական ժամանակը, երբ ժամանակը գրանցվում է: Նախորդ ժամանակները չեն թարմացվում, եթե տեղափոխվեք այլ ժամային գոտի: Հետևյալ աղյուսակում թվարկված են հնարավոր օրինաչափությունները, որոնք այս հավելվածը կարող է հայտնաբերել Ձեր տվյալներից: Այս հավելվածի լռելյայն ֆիքսված գլոկոզայի ցուցանիշներն այստեղ օգտագործվում են որպես շեմեր, որոնք առաջացնում են թիրախային միջակայքից դուրս օրինաչափություն: Թիրախային միջակայքում և ուտելուց հետո թիրախային միջակայքից դուրս օրինաչափություններն առաջանում են Accu-Chek SmartGuide հավելվածում Ձեր կողմից սահմանված թիրախային միջակայքի հիման վրա: Դուք պետք է շարունակաբար գրանցեք Ձեր սնունդը Accu-Chek SmartGuide հավելվածում, որպեսզի օգտվեք այս հավելվածում նախաճաշի կամ սննդի հետ կապված օրինաչափության հայտնաբերումից:

Օրինաչափություն	Նշան	Հնարավոր օրինաչափությունների նկարագրություն
Ցածր (առավոտյան, ցերեկը, երեկոյան, գիշերը)		Գլուկոզան 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր
Շատ ցածր (առավոտյան, ցերեկը, երեկոյան, գիշերը)		Գլուկոզան 54 մգ/դլ-ից (3.0 մմոլ/լ) ցածր
Երկարատև ցածր (առավոտյան, ցերեկը, երեկոյան, գիշերը)		Գլուկոզան 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր 2 ժամից ավելի
Բազմակի ցածր մակարդակներ օրվա ընթացքում		Գլուկոզան 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր մի քանի անգամ նույն օրը
Շատ բարձր (առավոտյան, ցերեկը, երեկոյան, գիշերը)		Գլուկոզան 250 մգ/դլ-ից (13.9 մմոլ/լ) բարձր
Նախաճաշից առաջ բարձր		Գլուկոզան 130 մգ/դլ-ից (7.2 մմոլ/լ) բարձր: Ներկայացված ցուցանիշը միայն օրինակ է: Ձեր գլուկոզայի ցուցանիշը կախված է Accu-Chek SmartGuide հավելվածում Ձեր կողմից սահմանված «Ներքին

		թիրախային ցուցանիշից»: Ժամանակահատված՝ 06:00–10:00
Բարձր (առավոտյան, ցերեկը, երեկոյան, գիշերը)		Գյուլկոզան 180 մգ/դլ-ից (10.0 մմոլ/լ) բարձր
Ուտելուց հետո թիրախային միջակայքից դուրս		Գյուլկոզան ուտելուց հետո Ձեր թիրախային միջակայքից դուրս է
Նախաճաշից առաջ թիրախային միջակայքում		Գյուլկոզան ուտելուց առաջ Ձեր թիրախային միջակայքում է: Ժամանակահատված՝ 06:00–10:00
Թիրախային միջակայքում		Գյուլկոզան Ձեր թիրախային միջակայքում է
Հաջորդական օրեր թիրախային միջակայքում		Գյուլկոզան թիրախային միջակայքում է 3 կամ ավելի հաջորդական օրեր

<p>Ուտելուց հետո թիրախային միջակայքում</p>		<p>Գլյուկոզան ուտելուց հետո Ձեր թիրախային միջակայքում է</p>
<p>Բարձր CGM փոփոխականություն</p>		<p>Գլյուկոզայի մակարդակները տատանվում են օրվա ընթացքում</p>
<p>Ցածր մակարդակի գերշտկում</p>		<p>Գլյուկոզան 3 ժամյա ժամանակահատվածում 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածրից տատանվում է մինչև 250 մգ/դլ-ից (13.9 մմոլ/լ) բարձր</p>
<p>Բարձր մակարդակի գերշտկում</p>		<p>Գլյուկոզան 3 ժամյա ժամանակահատվածում 250 մգ/դլ-ից (13.9 մմոլ/լ) բարձրից տատանվում է մինչև 70 մգ/դլ-ից (3.9 մմոլ/լ) ցածր</p>

10.2 Գլյուկոզայի ցածր և բարձր օրինաչափությունների հնարավոր պատճառները

Չետևյալ աղյուսակը ներառում է 1-ին կամ 2-րդ տիպի դիաբետ ունեցող մարդու ցածր և բարձր օրինաչափությունների հնարավոր պատճառները: Նկատի ունեցե՞ք, որ պատճառները կարող են չցուցադրվել բոլոր օրինաչափությունների և դիաբետի տեսակների համար: Հավելվածում Սեղմե՛ք յուրաքանչյուր պատճառի վրա՝ ավելի շատ տեղեկատվություն ստանալու համար:

Նշան	Պատճառ
------	--------

	<p>Ինսուլինի դեղաչափ</p>
	<p>Ներարկման տեղեր</p>
	<p>Սնունդ և խմիչքներ</p>
	<p>Ֆիզիկական ակտիվություն</p>
	<p>Հորմոնալ ազդեցություններ</p>
	<p>Հորմոններ և բիոռիթմեր</p>
	<p>Ջերմություն</p>
	<p>Սթրես, քուն և հիվանդություն</p>

10.3 Գլյուկոզայի օրինաչափության հիշեցման կարգավորում

Օրինաչափության հիշեցում սահմանելը թույլ է տալիս Ձեզ որոշել, թե ինչ գործողությունն էք ցանկանում ձեռնարկել: Օգտագործելով և՛ հավելվածի հավաքած տվյալները, և՛ Ձեր սեփական ապրելակերպի ու վարքագծի իմացությունը, Դուք կարող եք դրանք կիրառել ավելի լավ գլխկեմիկ հավասարակշռության հասնելու և կրիտիկական իրավիճակներից խուսափելու համար: Ցանկացած պահի կարող եք անցնել անհատական օրինաչափությանը և այնտեղից անջատել հիշեցումը: Երբ օրինաչափությունը լուծվում է, հավելվածն ինքնաբերաբար այն տեղափոխում է «Անցյալ» պատկեր: Մինևույն ժամանակ, եթե օրինաչափության վրա հիշեցում է սահմանված, հավելվածը հեռացնում է հիշեցումը:

1. Սեղմե՛ք «Օրինաչափություններ» ներքևի նավիգացիայից:
2. Սեղմե՛ք այն օրինաչափության վրա, որի մասին ցանկանում եք հիշեցում ստանալ:
3. Սեղմե՛ք «Սահմանել հիշեցում»:
4. Միացրե՛ք հիշեցման փոխարկման կոճակը:
5. Ընտրե՛ք օրը, ժամը և որքան հաճախ եք ցանկանում ստանալ օրինաչափության հիշեցում: Սեղմե՛ք «Պահպանել»:
6. Սեղմե՛ք «Կատարված է»: Հաստատման Էկրանը ցուցադրվում է: Սեղմե՛ք «OK»:

Կրկնե՛ք նույն քայլերը յուրաքանչյուր առանձին օրինաչափության համար, որի մասին ցանկանում եք հիշեցում ստանալ:

10.4 Նշում ավելացնելը

Դուք կարող եք նշում ավելացնել միայն օրինաչափության օրերին: Այս նշումը կհայտնվի նաև Ձեր օրինաչափության հաշվետվության մեջ:

1. Սեղմե՛ք «Օրինաչափություններ» ներքևի նավիգացիայից:
2. Սեղմե՛ք այն օրինաչափության վրա, որին ցանկանում եք նշում ավելացնել:
3. Սեղմե՛ք այն օրվա վրա, երբ օրինաչափությունը տեղի է ունեցել:
4. Սեղմե՛ք «Ավելացնել» և մուտքագրե՛ք կարճ նկարագրություն:

10.5 Շաբաթական ամփոփագրի ծանուցման ակտիվացում

Նախորդ շաբաթվա օրինաչափությունների ամփոփագիրը ստեղծվում է ամեն երկուշաբթի: Այս ամփոփագրի հասանելի լինելու մասին ծանուցում ստանալու համար.

1. Սեղմե՛ք «Օրինաչափություններ» ներքևի նավիգացիայից:
2. Սեղմե՛ք «Ակտիվացնել»՝ «Շաբաթական ամփոփագիր» պատկերի վրա:
3. Միացրե՛ք ծանուցման փոխարկման կոճակը:
4. Սեղմե՛ք «Հաջորդ»:
5. Սեղմե՛ք «Ծանուցել ինձ ամեն օր» կոճակը և խմբագրե՛ք այն ժամը, երբ ցանկանում եք ստանալ Ձեր ծանուցումը:
6. Սեղմե՛ք «Հաջորդ»: Հաստատման Էկրանը ցուցադրվում է: Սեղմե՛ք «OK»:

Դուք կարող եք փոփոխել Ձեր ընտրությունները Մենյու > Ծանուցումների կարգավորումներ բաժնից:

11. Հաշվետվության արտահանում


Երբ առաջին անգամ եք հաշվետվություն արտահանում, ծանոթացեք Էկրանին ներկայացված գործառնությունի նկարագրությանը: Սեղմեք նշանին՝ ցանկացած պահի նկարագրությանը վերադառնալու համար: Դուք կարող եք հաշվետվությունն արտահանել անմիջապես այս հավելվածից: Դուք հնարավորություն ունեք ներառելու ձեր Ամբուլատոր գլուկոզայի պրոֆիլը (AGP) և/կամ օրինաչափությունները երկու շաբաթվա ժամանակահատվածի համար: Ձեր PDF հաշվետվությունը ձեզ բուժող բժշկի հետ կիսվելը հեշտ է: Համոզվեք, որ ձեր անձնական տվյալները կիսվելու համար օգտագործվող մեթոդը, օրինակ՝ Էլեկտրոնային փոստը, ունի պաշտպանության համակարգեր՝ ձեր տվյալների անվտանգությունն ապահովելու համար:

1. Սեղմեք Մենյու > Արտահանել հաշվետվությունը:
2. Ընտրեք ձեր հաշվետվության համար նախատեսված երկշաբաթյա ժամանակահատվածը:
3. Ընտրեք ձեր հաշվետվության բովանդակությունը:
4. Սեղմեք «Ստեղծել հաշվետվություն»:
5. Ձեր հաշվետվությունը կցուցադրվի:

Դուք կարող եք կիսվել հաշվետվությամբ կամ պահպանել այն՝ ավելի ուշ վերանայելու համար: Եթե ստեղծված հաշվետվությունը փակեք մինչև պահպանելը, վերստեղծեք այն և ապա պահպանեք ձեր նախընտրած վայրում:

12. Հավելվածի կարգավորումներ

Հավելվածի կարգավորումները դիտելու և փոփոխություններ կատարելու համար ստորին նավարկման վահանակից սեղմեք «Մենյու»: Պարբերաբար վերանայեք կարգավորումները և այլ մանրամասներ: Ամենաթարմ տեղեկատվությունը կապահովի լավագույն փորձառությունը հավելվածի օգտագործման ընթացքում:



Ծանուցումների կարգավորումների խմբագրում

1. Սեղմեք Մենյու > Ծանուցումների կարգավորումներ:
2. Ըստ անհրաժեշտության՝ միացրեք կամ անջատեք ծանուցումների փոխարկման կոճակը:
3. Եթե միացնում եք ձեր շաբաթական օրինաչափությունների ամփոփման ծանուցումը, անհրաժեշտության դեպքում կարգավորեք ժամը:
4. Սեղմեք «Պահպանել»:

Հաշվի մանրամասների խմբագրում

1. Սեղմեք Մենյու > Օգտահաշիվ > Կառավարել օգտահաշիվը:
2. Ավելացրեք կամ թարմացրեք անհրաժեշտ տեղեկատվությունը: Սեղմեք «Պահպանել»:

Գաղտնիության կարգավորումներ

1. Սեղմեք Մենյու > Օգտահաշիվ > Գաղտնիության կարգավորումներ:

Արտադրանքի մասին տեղեկատվության էկրան

1. Սեղմեք Մենյու > Արտադրանքի մասին:

Դուրս գալ

1. Սեղմեք Մենյու > Օգտահաշիվ > Դուրս գալ:

Չափի ջնջում

1. Սեղմեք Մենյու > Օգտահաշիվ > Ջնջել իմ Օգտահաշիվը:
2. Չամոզվեք, որ ցանկանում եք կատարել այս գործողությունը: Եթե ջնջեք ձեր Accu-Chek օգտահաշիվը, բոլոր տվյալները կկորչեն: Ձեր տվյալները հետագայում հնարավոր չի լինի վերականգնել:
3. Սեղմեք «Կատարված է»:

13. ԽՆդիրների վերացում

13.1 ԽՆդիրների վերացում

Լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք ստորև բերված հղումների վրա:

- Գլուկոզայի կանխատեսման սխալի հաղորդագրություններ
- Ցածր գլուկոզայի կանխատեսման բացառություններ
- Գիշերային ցածր մակարդակի կանխատեսման սխալի հաղորդագրություններ
- Գլուկոզայի ցածր և բարձր օրինաչափությունների հնարավոր պատճառներ

13.2 Ծանուցումների ընդհանուր նկարագիր

Չավելվածը ձեզ հետ հաղորդակցվում է տարբեր ձևերով:

- Որոշ ծանուցումներ միայն տեղեկատվական բնույթի են: Կարդացեք ծանուցումը և սեղմեք նշանին՝ այն փակելու համար:
- Այլ ծանուցումներ առաջարկում են լրացուցիչ գործողություններ, որոնք կարող եք կատարել: Կարդացեք ծանուցումը և ընտրեք ցանկալի գործողությունը:

Չավելվածն օգտագործելիս կարող եք հանդիպել հետևյալ տեսակի տեղեկատվական ծանուցումների՝

- Օգնություն՝ սկզբնական կարգավորման առաջադրանքների հետ կապված
- Տեղեկատվություն ձեր գլուկոզայի ընթացիկ մակարդակի մասին
- Տեղեկատվություն ձեր գլուկոզայի կանխատեսման մասին
- Տեղեկատվություն ձեր գլուկոզայի ցածր և բարձր մակարդակների մասին
- Տեղեկատվություն հավելվածի կամ ձեր հեռախոսի հետ կապված տարբեր տեսակի խնդիրների մասին

14. Հաճախորդների սպասարկում

Կապ մեզ հետ Եթե խնդիրների եք հանդիպում, հարցեր ունեք հավելվածի շահագործման վերաբերյալ կամ լրացուցիչ տեղեկությունների կարիք ունեք հավելվածի մասին, կապվեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: Սեղմեք Մենյու > Կապ մեզ հետ:

Լուրջ միջադեպերի մասին հաղորդում Եթե այս սարքի օգտագործման ընթացքում կամ դրա օգտագործման հետևանքով տեղի է ունեցել լուրջ միջադեպ, խնդրում ենք հայտնել այդ մասին արտադրողին և ձեր երկրի իրավասու մարմնին:

Տպագիր օգտատիրոջ ձեռնարկ Եթե ցանկանում եք ստանալ այս Օգտագործողի ձեռնարկի տպագիր տարբերակը, կապվեք հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ: Տպագիր տարբերակն անվճար է և կուղարկվի ձեզ մի քանի օրվա ընթացքում:

Օգտատիրոջ ձեռնարկի ներբեռնում Այս Օգտագործողի ձեռնարկը հասանելի է ներբեռնման համար հետևյալ հղումով` <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>.*

*Ներբեռնումը կարող է հանգեցնել տվյալների օգտագործման/ վճարումների

15. Տեխնիկական տվյալներ

Արտադրանքի անվանումը Accu-Chek SmartGuide Predict հավելված

Հավելվածի տեսակը Հավելված հեռախոսների համար

Հավելվածի տարբերակը Ձեր օգտագործած հավելվածի տարբերակի մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեղմեք Մենյու > Արտադրանքի մասին:

Աջակցվող օպերացիոն համակարգեր Հավելվածը հասանելի է միայն որոշակի օպերացիոն համակարգերի համար: Օգտագործեք հավելվածը միայն այն դեպքում, եթե օպերացիոն համակարգն աջակցվում է հավելվածի կողմից: Համատեղելի օպերացիոն համակարգերի և դրանց տարբերակների մասին վերջին տեղեկությունների համար այցելեք՝ <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>:








Աջակցվող հեռախոսներ Դուք կարող եք ներբեռնել հավելվածը միայն այն դեպքում, եթե հեռախոսն աջակցում է շահագործման համար պահանջվող iOS կամ Android տարբերակը: Համատեղելի հեռախոսների մասին վերջին տեղեկությունների համար այցելեք՝ <https://tools.accu-chek.com/documents/dms/index.html>:








Աջակցվող բրաուզերներ Accu-Chek օգտահաշիվ ստեղծելու և հավելված մուտք գործելու համար ձեզ անհրաժեշտ է բրաուզեր: Եթե արդեն տեղադրված բրաուզեր չունեք, նախ պետք է այն ներբեռնեք:



- Google Chrome
- Mozilla Firefox
- Mozilla Firefox Focus
- Microsoft Edge
- Samsung Internet Այս հավելվածը համատեղելի է iOS սարքերի Safari բրաուզերի հետ:

16. Հավելվածի նշանների բացատրություն

Նշան	Նկարագրություն
Հավելվածի նավիգացի	
	Գլխավոր էջ
	Օրինաչափություններ
	Մենյու
Էկրանի նավիգացիա	
	Հետ
	Փակել

	<p>Նշում</p>
	<p>Լրացուցիչ տեղեկություններ</p>
<p>Հավելվածի մենյու</p>	
	<p>Օգտահաշիվ</p>
	<p>Միացումներ</p>
	<p>Ծանուցումների կարգավորումներ</p>
	<p>Արտահանել հաշվետվությունը</p>
	<p>Արտադրանքի մասին տեղեկատվություն</p>

	<p>Կապ մեզ հետ</p>
	<p>Օգտագործողի ձեռնարկ</p>
	<p>Ջեռախոս</p>
	<p>Էլ. փոստ</p>
<p>Գլխավոր Էկրան</p>	
	<p>Չգուշացման հաղորդագրություն</p>
	<p>Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսումը հասանելի է</p>
	<p>Գիշերային հիպոգլիկեմիայի կանխատեսումը հասանելի չէ</p>

	Գլուկոզայի կանխատեսումը հասանելի է
	Գլուկոզայի կանխատեսումը հասանելի չէ

17. Պայմանանշանների բացատրություն

Նշան	Նկարագրություն
	Ծանոթացեք օգտագործման Էլեկտրոնային հրահանգներին
	Չգուշություն, տե՛ս անվտանգության հետ կապված նշումները այս արտադրանքին ուղեկցող օգտագործման հրահանգներում:
	Արտադրման ամսաթիվ
	Բժշկական սարք
	Արտադրող
	Լիազորված ներկայացուցիչ Շվեյցարիայում
	Սարքի եզակի նույնացուցիչ



Համապատասխանում է կիրառելի ԵՄ օրենսդրության
դրույթներին

ՎԵՐՁԻՆ ԹԱՐՄԱՑՈՒՄ` 2025-02

ACCU-CHEK-ը և ACCU-CHEK SMARTGUIDE-ը Roche-ի ապրանքային նշաններն են:

App Store-ը Apple Inc.-ի սպասարկման նշանն է՝ գրանցված ԱՄՆ-ում և այլ երկրներում:

iOS-ը Cisco-ի ապրանքային նշանն է կամ գրանցված ապրանքային նշանը ԱՄՆ-ում և այլ երկրներում:

Android-ը, Google Play-ը և Google Play-ի տարբերակները Google LLC-ի ապրանքային նշաններն են:

Wi-Fi®-ը Wi-Fi Alliance®-ի գրանցված ապրանքային նշանն է:

Բոլոր այլ արտադրանքների անունները և ապրանքային նշանները իրենց համապատասխան սեփականատերերի սեփականությունն են:

© 2025 Roche Diabetes Care

Roche Diabetes Care GmbH

Sandhofer Strasse 116

68305 Mannheim, Գերմանիա

www.accu-chek.com